Լեհվազ

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 73 կմ,
Հեռավորությունը Մեղրի քաղաքից՝ 6 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 900 մ,
Կարգավիճակը՝ սահմանամերձ,
Նախկին անվանումներն են Լեգբա, Լեգվազ, Լեկվազ, Լեհվանա, Լեյվազ, Լեվազ, Լեվազոռոր, Լիհքվազ, Լեհվազ ներքին: Մտնում էր Ելիզավետպոլի նայանգի Զանգեզուրի գավառի մեջ: Ղևոնդ Ալիշանի մոտ նշված է Լեշկված տարբերակը: Գյուղի մոտ գտնվում է մի հին ու լքված բնակավայր, որը ըստ երևույթին հին գյուղն է. որին տրվում է նաև Վերին Լեհվազ անունը: Ս. Էփրիկյանը Վերին Լեհվազ է անվանում Լեճքվազ գյուղը: Ղուկաս Ինճիճյանը ևս վերին Լեհվազը նույնացնում է Լիճքավազ գյուղին:
Տնտեսությունը
Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ
Հողեր (ընդամենը)՝ 3385 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 1336 հա, որից՝
- վարելահող՝ 77 հա, բազմամյա տնկարկ՝ 39 հա, խոտհարք՝ 12 հա, արոտ՝ 332 հա, այլ հողատեսք՝876 հա
- բնակավայրերի հողեր՝ 57 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 4 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 17 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 1934 հա,
- անտառային հողեր՝ 22 հա, որից անտառածածկ՝ 22 հա
- ջրային հողեր՝ 14 հա